ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2019 թվականի N107Ա

ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը՝

որոշում եմ.

1. «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Կապան քաղաքի Բաղաբերդի 13 հասցեում գտնվող տուբերկուլոզային մասնաշենքը՝ 1551.7 քառ. մետր մակերեսով տարածքով և 0,257 հա հողամասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նարեկ Դավթյան	-	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (նախագահ),
Արմեն Թադևոսյան	-	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ,
Արփինե Դավթյան	-	մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ,
Կարեն Մելքոնյան	-	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն,
Անուշ Գալստյան	-	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հաշվապահ:

2. Հանձնաժողովին՝ մինչև ս/թ դեկտեմբերի 20-ը ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

25.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 25
ք. Կապան